Գլխաւորը այն է սակայն, որ այս երկու ծրագիրները վաւերացուեցան, բայց եւ այնպէս Ռուսիա, Ղազախստան, Ազրպէյճան, Թուրքմենիստան եւ իրան որեւէ օրինական համաձայնութեան չյանգեցան Կասպից ծովուն սահմանագծման շուրջը: Անցեալ շաբաթ նշալ 5 երկիրներուն արտաքին գործոց փոխ նախարարները երկու օրուան տևողութեամբ հանդիպում մը ունեցան Պաքուի մէջ՝ համաձայնութեան փորձ մը կատարելու համար: Ըստ «Ար. Այ. էյ. Նովոսթի» լրատու գործակալութեան, հանդիպումն էտք մասնաւորապէս ընթացքին կասպեան հարցերու ուսումնասիրման թանաքները վերջին ֆալիտիստի յայտնեց, թէ գոհ մնացած է ժողովին, սակայն վերջնական համաձայնութեան մը հասնելու համար հարցը յաւելելու քննարկումի կը կարօտի եւ շատ

ՌԻԺԱԿԻՒԹԸ ՆՈՐԱՆՈՐ ՀԱՐՑԵՐՈՒ ԴՈՒՌ ԿԸ ԲԱՆԱՅ ԿԱՍՊԵԱՆ ԾՐՋԱՆԻՆ ՄԷՋ

Կասպից ծովու ուժանիւթի շահարկման բարդ հարցը բաւական երկար ժամանակ է Վեր մեկան կը հոսեցնէ եւ կը գրաւէ բոլորիս ուշադրութիւնը: Արդարեւ, կասպեան աւազանի 5 երկիրներուն միջեւ կայանալիք տարածքային համաձայնութիւնը միշտ ալ կ'ուշանայ՝ անոնց միջեւ գոյութիւն ունեցող լարւածութեան իբրեւ հետեւանք, ինչ որ պատճառ կը դառնայ, որ կասպեան շրջանի ծրագիրները չվաւերացուին կամ ձախողութեան մատնուին:

Այս ծիրէն ներս վերջին իրադարձութիւնը եղաւ բնական կազի արտահանման մեծ ծրագիրը մը վաւերացումը, որ կայացաւ այնպիսի ժամանակի մը ընթացքին, երբ կասպեան աւազանի երկիրները կը շարունակեն հարցը քաջալիք՝ փորձելով այս լարուած միջոցառումն մէջ հասնիլ համաձայնութեան մը, որ կը գոհացնէ բոլոր կողմերը:

Արդարեւ, Կասպից ծովու ուժանիւթի աղբիւրներուն զարգացման պատասխանատու խմբակը 27 Փետրուարին հաստատեց 3,2 միլիարդ ամերիկեան տոլար արժող «Շահ Տենիզ»ի ծրագիրը, որ 2006էն սկսեալ Վրաստանի վրայով կազ պիտի արտածէ դէպի Թուրքիա:

Ազրպէյճանի ուժանիւթի նախարարը՝ Մեհիա Քերիմով անդրադարձաւ խմբակին այս ազդեցական պատգամին եւ ողջունեց զայն՝ ըսելով, թէ այս ծրագիրին գործադրութեամբ Ազրպէյճան պիտի դառնայ կազ արտածող շրջանի կարեւորագոյն երկիրներէն մէկը: Նշենք, թէ այս խմբակին մաս կը կազմեն բրիտանական «Պրիթիլ Փեթրոլիում», նորվեգիական «Սթէթօյլ», ֆրանսական «Թոթալֆինա-էլֆ», Ազրպէյճանի «Սոքար», ռուսեկտալական «Լուք Աճիփ», պարսկական «Օ. Ի. Այ. Սի.» եւ, վերջապէս, թրքական «Թ. Փ. էյ. Օ.» ընկերութիւնները:

960 քմ. երկարութեամբ կազատարի մը կառուցումը պիտի սկսի 2004ին եւ Պաքուն ու Թիֆլիսը պիտի կապէ իրարմ գտնուող թրքական կազի կեղծոնին: Ազրպէյճանի շրջանին «Շահ Տենիզ»էն դէպի Թուրքիա արտածուելիք կազին քանակը պիտի հասնի մօտ 8,4 միլիարդ խորանարդ մեթրի, հակառակ անոր որ Թուրք մասնագէտները կը պահանջեն, որ 2006ին ստացուելիք կազին քանակը ըլլայ միայն 2 միլիարդ խորանարդ մեթր, իսկ 2009էն 2020 այդ քանակը բարձրանայ տարեկան 6,6 միլիարդ խորանարդ մեթրի: Կը խօսուի մինչեւ իսկ արեւելեան 16 միլիարդ խորանարդ մեթրի մասին՝ 2020էն ետք:

Ներկայիս Թուրքիա բաւական առատ կազ ունի, նկատի ունենալով, որ Ռուսիա եւ իրան անոր կը հայթայթեն պէտք եղած քանակը, իսկ «Շահ Տենիզ»ի ծրագիրով կը սպասուի, որ Թուրքիա բաւական յառաջանայ այս մարզին մէջ, ինչ որ իր դրական անդրադարձը պիտի ունենայ վերջ յիշուած ընկերութիւններուն վրայ, որոնք պիտի կարենան մեծապէս օգտուիլ Թուրքիոյ միջոցով այլ երկիրներ փոխանցուելիք կազի շահերէն:

Յստակ է, որ խմբակին մասնակցող ընկերութիւնները կը փորձեն ապահովել կազատար եւ քարիւղատար խողովակներու կառուցումը կողմասեան ուժանիւթի այն նրբանցքին մէջ, որ կ'ընդգրկէ արդէն իսկ վաւերացուած Պաքու-Թիֆլիս-ձէյհան քարիւղատար խողովակը:

Ինչ կը վերաբերի «Շահ Տենիզ»ի ծրագրին, ըստ «Փեթրոլիում Արկլո» ճարտարաւարտական պարբերականին, կը սպասուի, որ այս մեծ ուժանիւթի աղբիւրը տարեկան մօտ 16 միլիարդ խորանարդ մեթր կազ արտադրէ, իսկ անդին կարգ մը շուկաներու համաձայն, արտադրութիւնը շատ աւելի մեծ կը պատկերացուի, սակայն այս մեծ քանակին վերջնական ճակատագիրը տակաւին յստակ չէ:

Նշենք, թէ այս կազատարին նախախնայումը, որ նախապէս կը սպասուէր, որ անցեալ տարի սկսէր, ծախսալից թուելով՝ յետաձգուած էր շարք մը բանակցութիւններէ ետք: Անցեալ շաբաթ, սակայն, «Ինթերֆաքս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ Եւրոպական Բարգաւաճման եւ Զարգացման Դրամատունը ազրպէյճանական «Սոքար» ընկերութեան փոխ պիտի տայ 170 միլիոն տոլար գումար մը, այսպիսով ապահովելով ծրագրին մէջ ընկերութեան վերջնելիք 320 միլիոն տոլար բաժնիին մէջ մասը, հակառակ անոր որ ընկերութիւնը կ'ակնկալէր 250 միլիոն տոլարի օժանդակութիւն մը: Պէտք է ըսել սակայն, թէ «Շահ Տենիզ»ի ծրագիրը պիտի արտօնէ, որ Ազրպէյճան հասնի 1990ականներէն ի վեր իր հետապնդած նպատակին: Ազրպէյճան միշտ ալ երազած է ունենալ ուժանիւթի 2 խողովակներ, որոնք զինք պիտի դարձնեն աշխարհի ուժանիւթի կարեւորագոյն կեղծոններէն մէկը:

հաւանաբար այդ մէկը տեւէ ամբողջ տարի մը, եթէ ոչ աւելի:

Մինչ այդ «Ինթերֆաքս» եւ «Թուրան» լրատու գործակալութիւնները հրատարակեցին հաղորդագրութիւն մը, որուն մէջ յիշուած է, թէ Ռուսիա կը փորձէ իր դրացի երկիրները մղել դասաւորուածներ ընելու տակաւին չվճուած հարցերուն շուրջ, որպէսզի կարելի ըլլայ համաձայնութեան մը հասնիլ, նոյնիսկ եթէ սահմանագծումը հարցը առկախ մնայ: Նշեալ ծրագիրը կը նպատակադրէ միջին եզրի մը վրայ հիմնուելով յատուկ շրջաններ հաստատել հանքային իրաւունքներու համար, ինչպէս նաեւ՝ 15 միլիոն լայնքով ծովեզրային գօտիներ «հիմնել»: Ծրագիրը նաեւ 5 երկիրներուն արտոնութիւն կու տայ ծովէն խողովակներ անցնելու:

Ըստ երեւոյթին, Քալիուսի կը փորձէ հարցը լուծել երկկողմանի համաձայնութեամբ: Ռուսիա արդէն իսկ համաձայնութիւններ կ'ընթացէր Հազախստանի եւ Ազրպէյճանի հետ, սակայն գլխաւոր հարցը կը մնայ իրանը: Արդարեւ, իրան կը պահանջէ ծովեզրեզք բաժնի 5 հաւասար մասերու եւ այսպիսով իւրաքանչիւր երկիրն ապահովել 20 տոկոսի բաժին մը, բայց միւս երկիրները եւ մանաւանդ Ռուսիա եւ Ազրպէյճան կ'ընդդիմանան այս մէկուն եւ կը մերժեն որդեգրել նման լուծում մը, մանաւանդ որ իրան կը գտնուի «հարեկալական» երկիրներու սեւ ցանկին վրայ: Հետաքրքրականը այն է, թէ հակառակ անոր որ կարգ մը գոշակութիւններ կան, որ կ'ըսեն, թէ իրան շատ հաւանաբար իր կեցուածքը մեղմացնէ, եթէ Ռուստոնութիւններ բաժնեկցելու սկզբունք մը որդեգրուի, Քալիուսի կառչած կը մնայ իր կարծիքին եւ կը հաւատայ, թէ իրանի կեցուածքը անորոշ է եւ միշտ ալ այդպէս պիտի մնայ, հետեւաբար պէտք չէ խաբուիլ երեւակայական գոշակութիւններով եւ տարուիլ սին յոյսերով:

Աւելի մեծ հարուածը, սակայն, եղաւ անհասկացողութեան մը ծագումը, Ռուսիոյ եւ Կասպեան շրջանի իր ամէնէն մօտիկ դաշնակիցին՝ Հազախստանի միջեւ, երբ զազախ արտաքին գործոց փոխ նախարարը՝ Քայրաթ Ապուսէյթով անակնկալօրէն յայտարարեց, թէ Ասթանա կը ծրագրէ ծովուժի յատուկ տորմի մը կազմել՝ Կասպեան շրջանին մէջ հակակրճիտի տակ առնելու համար հակակազան գործողութիւնները, թմրեցուցիչներու մաքսանակութիւնն ու գաղութականներու ապօրինի «երթեւեկ»ը:

Ներկայիս Կասպեան շրջանին մէջ Հազախստանի ռազմական ներկայութիւնը շատ տկար է, նկատի ունենալով, որ 2002ին Ռուսիա ձեռնարկած էր ռազմական մեծ ծրագիր մը եւ՝ առաջարկած, որ Հազախստան եւս բաժին վերցնէ այդ ծրագրին մէջ, բայց այս վերջինը օրին այդքան ալ մեծ հետաքրքրութիւն չէր ցուցաբերած եւ երկուստ քայլերով մասնակցած էր Ռուսիոյ ծրագրին, իսկ ներկայիս Հազախստան կը հակասէ իր իսկ կեցուածքին՝ յայտնելով, թէ կը ծրագրէ յատուկ տորմի ունենալ կասպեան շրջանին մէջ:

Այս յայտարարութեան շուրջին տակ Քալիուսի բաւական զարթացած կը թուի ըլլալ: «Ինթերֆաքս» եւ «Իթար - Թաս» լրատու գործակալութիւնները տեղեկացուցին, թէ Քալիուսի ըսած է. «Հազախստանի այս որոշումը բոլորովին անհիմն է: Գլխաւոր սկզբունքը, որով մենք կը փորձենք լուծել հարցը եւ հաստատել Կասպեան շրջանի օրինական կացութիւնը, ռազմական ուժերու բացառականութեան վրայ հիմնուած է, իսկ Հազախստան իր այս վերջին ծրագիրով դէմ կը կենայ համաձայնութեան փորձերուն, հետեւաբար կարելի չէ նման քայլի մը համաձայն գտնուիլ»: Հակառակ Քալիուսիի այս յայտարարութեան, սակայն, «Ար. Այ. էյ. Նովոսթի» լրատու գործակալութիւնը անցեալ շաբաթ հաղորդեց, թէ Ռուսիա մօտ օրէն «Տաղստան» օդանավակիրը պիտի աւելցնէ Կասպեան շրջանին մէջ արդէն իսկ տիրական հանդիսացող իր Աւատորմի զինք:

Ինչ կը վերաբերի Ասթանայի այն յայտարարութեան, թէ կը փափաքի կասպից ծովուն մէջին խողովակ մը երկարել, եթէ միանայ Պաքու - Թիֆլիս - ձէյհան քարիւղատար խողովակի ծրագրին հսկող խմբակին, Քալիուսի յայտնեց, թէ Ռուսիա պիտի հակառակի նման փորձի մը՝ այսպիսով հարցականի տակ առնելով միւս չորս երկիրներուն իրաւունքները:

Պաքուի մէջ Քալիուսի անդրադարձաւ այս հարցին եւ ըսաւ. «Մենք դէմ ենք Կասպից ծովուն մէջին խողովակներ երկարելու գաղափարին, որովհետեւ այդ մէկը կրնայ պատճառ դառնալ աշխարհաքաղաքական անկայունութեան, ինչպէս նաեւ կրնայ վտանգաւոր ըլլալ երկրաշարժներու պարագային»: Հարցը այն է, որ Քալիուսի իր այս յայտարարութեամբ չյատակացուց, թէ Ռուսիոյ պահանջած համաձայնութեամբ ո՞ր իրաւունքները պիտի պաշտպանուին, եթէ Հազախստան եւ Ազրպէյճան միասնաբար որոշեն խողովակ մը երկարել Կասպեան իրենց սահմանները իրարու կապող շրջանին մէջ:

ՄԱՅՔԸ ԼԵՎԵԼՏ
«Եւրոէթիաճէթ» կայք
«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»Ի ճԵՌ ԿԱԿՈՒԵԼՈՒ ՃԱՄԱՐ ՃԵՌԱՃԱՅԵԼ
ՃԵՌԱՃԱՅԵԼ ԹԻԻԵՐՈՒՆ. -258526, 260115 ԵՎ 241274:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
«ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ»
ՄԱՍՆԱԾԻՂ
CINE-CLUB
«ԱՐԱՐԱՏ» ՖԻԼՄԻ ԸՆՆԱՐԿՈՒՄ
Կլոբ սեղանի շուրջ,
որուն կը մասնակցեն՝
ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՄՐԱՊԵԱՆ ԼՈՒՍԿ
ԸՆՍԵՒԵՆԱՆ ՄԻՆԱՍ
ՍԵՓԱՆԵԱՆ ՎՐԳԵՆ
Չրոցավար՝
ՍԱՊՈՒՆԾԵԱՆ ԼՈՐԻԿ
Տեղի կ'ուճեայ Չորեքշաբթի, 12 Մարտ 2003,
Երեկոյան ժամը 8:00իս, «Ազատամարտ»
ակումբի «Չուխատարեան» սրահին մէջ:
ԵՐԱՒԵՐ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ
ՌԻՇԱԿՐՈՒԹԵԱՆ
«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցիլ գիրով (հաստատութեանց պարագային)՝ մարտնոյն պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ Գերկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենյակը:

ՌԻՒԼԵՐՍ ՀԻՌՈՅ
«Փալլադա»/բրոնիքըլ»

ԸԱՅ ՄԵԾ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

Աջապահեանքը գերդաստանը, Սուրբ Աջերու պահպանությունը եւ եկեղեցու սպասարկության նուիրումը ըլլալով, մեծանուն հոգեւորականներ ու կայսերական հրովարտակով Կիլիկիոյ գահին իրաւատէք գտնաւորով՝ իրենց յաջորդ կաթողիկոսներ տուաւ, որոնք սերունդէ սերունդ բոլոր ներդրումներուն դէմ դնելով՝ արեան գնով պահպանեցին իրենց աւանդ ձգուած գահն ու Սուրբ Աջերու:

ԱՋԱՊԱՀԵԱՆՆԵՐԸ ԲԱԶՄԱՃԻՂ ԳԵՐԴԱՍՏԱՆ

Աջապահեանքը, որդուց որդի բազմանալով, մեծ եւ բազմաճիւղ գերդաստան կազմեցին, տարբեր շրջաններ տարածուեցան ու ամէնուրեք հոգեւոր սպասարկուներ տուին: Աջապահեան տոհմը, այսպէսով, գլխաւոր երեք ճիւղերու բաժնուեցաւ. ա) Հեթումեան ճիւղ, բ) Վահկայի կամ Վանկոյ Սուրբ Նշանի ճիւղ եւ գ) Նազեց կամ Նազոնց տուն: Գլխաւոր այս ճիւղերը իրենց կարգին բազմանալով՝ գնազան ենթաճիւղերու բաժնուեցան. այսպէսով կազմաւորուեցան Տէր Եղիազար, Տէր Մանուէլ եւ Տէր Մարկոս քահանաներուն բազմանալով տունները:

Իսկ Թիֆլիսի Աջապահեանները (որոնք հոն հաստատուած էին Կիլիկեան թագաւորութեան անկումից ժամանակ) առանձին ճիւղ կազմեցին. անոնց ճիւղագրութիւնը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ. նախահայր՝ Յովհաննէս եւ անոր սերունդները, որդուց որդի՝ Արոբ, Պայընտուր, Սիմէոն, Զուրաբ, Յովհաննէս, Ալիսան, անոր գաւազները՝ Սիմէոն եւ Զուրաբ, Զուրաբի գաւազը՝ Մովսէս, անոր գաւազները՝ Դաւիթ, Գաբրիէլ, Սողոմոն եւ Սուր:

Սիսի մէջ Աջապահեանները աթոռանիստ քաղաքին ամէնէն մեծ եւ հեղինակաւոր գերդաստանը կազմեցին, իսկ Վահկայի Աջապահեանները սերունդէ սերունդ Վահկայի տէրերը մնացին (մինչեւ ԺԺ. դար): Աջապահեան ընտանիքներ տարբեր ժամանակներ Կիլիկիոյ ու Փոքր Ասիոյ տարբեր գիւղերու ու քաղաքներու մէջ գործած ու բնակած ըլլալով՝ անոնցմէ յիշուած են Սիսի շրջակայ գիւղերուն, Վահկայի եւ շրջակայքին, Հաճընի, Թոմարայի, Կեսարիոյ եւ Կուտինայի մէջ, իսկ Մարաշի Սիսեան ընտանիքին մօտ պահուած աւանդութեան համաձայն, իրենք ծագուածով սեզի Աջապահեաններէն սերած են:

Աջապահեաններու Սիսի գլխաւոր տան ճիւղագրութիւնը կը սկսի Տէր Եղիազար քահանայով, որմէ ետք, որդի ի հօրմէ յաջորդութեամբ՝ Յովհաննէս եպիսկոպոս, Տէր Եղիազար քահանայ (երկրորդ), Մատեար Սիսան, Տէր Մահակ քահանայ եւ անոր գաւազը՝ Տէր Եղիազար քահանայ (երրորդ), որուն երեք գաւազները՝ Տէր Արիստակէս, Տէր Յուսիկ եւ Տէր Սուրբիս քահանաները իրենց սերունդներով գերդաստանէն ներս երեք ենթաճիւղեր կազմեցին. անոնցմէ Տէր Յուսիկի ընտանիքը ձեռք ձգեց Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, որ յետոյ փոխանցուեցաւ Տէր Արիստակէսի ճիւղին:

ՍՈՒՐԲ ԱՋԵՐՈՒ ՀՈՂԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ

Աջապահեաններու պահպանութեան յանձնուած Ս. Գրիգոր Լուսաւորիչի, Ս. Սեղբեստրոսի, Ս. Նիկողոսոս Սքանչեւագործի եւ Ս. Պարսամ ձգնաւորի Աջերը, արծաթապատ արկղի մը մէջ դրուած, սերունդէ սերունդ Սիսի Աջապահեաններու նահապետին տան մէջ աւանդ մնացին: Տարին անգամ մը միայն, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուսուրի վերապ տօնին Աջերը Աջապահեաններու տունէն եւ Աջապահեան ընտանիքի անդամներու կողմէ թափօրով դուրս հանուելով՝ մայրամասը կը տարուէին ժողովուրդին ցուցաբերելու համար:

Հետագային Աջերը Աջապահեաններու տունէն վանքին գանձատուրը փոխադրուեցան, ուր անոնց պահպանութիւնը դարձաւ Աջապահեաններու տան իրաւունքը մնաց:

Կաթողիկոսարանը, իբրեւ վարձատրութիւն Աջապահեաններու ծառայութեան, պարտականութիւն ստանձնեց խնամել անոնց աղքատներն ու կարիքաւորները եւ հոգալ գերդաստանին երիտասարդներուն ու երիտասարդուհիներուն ամուսնութեան ծախսերը:

ՏԵՐ ՅՈՒՍԻԿ ԲԱԶՄԱՃԻՂ ԱՋԱՊԱՀԵԱՆ

Սիսի Աջապահեաններէն նշանաւոր դարձաւ Յակոբ երէց. կնոջ մահէն ետք ան քահանայական կոչում ստացաւ հաւանաբար Յովհաննէս Դ. Այնթապցի կաթողիկոսին օրով, ԺԶ. դարուն սկիզբը եւ երկար ժամանակ քահանայագործեց Սիսի եւ շրջակայքին մէջ. իրեն բանիմաց, տարասաց եւ պերճախօս հոգեւորական՝ Հոնտոր կոչումը ստացաւ, իսկ Միսնաս Քացար Սեցի կաթողիկոսին օրով (1621-1632) Սիսի մայրամասին փակակալի պաշտօնը ստանձնեց:

Յակոբ Հոնտոր քահանայի յօրինած երգերէն պատասխաններ մնացած են. ան նաեւ 1286ին գրուած եւ Կիլիկիոյ թագաւորութեան ծագման ու զարգացման նուիրուած ճաշոյցի մը մէջ յիշատակութիւն ձգած է, ուր տեղեկութիւններ փոխանցած է մեզի անձանօթ հիւանդանոցի մը՝ իմարասարանի մասին, հետեւեալ արձանագրութեամբ. «Ի հայրապետութեան Տէր

ԱՋԱՊԱՀԵԱՆՆԵՐԸ ԻՐԱՒԱՏԷՐ՝ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

Տէր Մինաս կաթողիկոսին՝ բուական հայոց Ռէէ (1628) նուստոս յամենայնի Յակոբ Սեցի, որ այժմ փակակալ ի դուռն Սուրբ Լուսաւորչի: Ի Կիլիկիա այժմ որ իմարաստան ասի Բ. եւ Գ. (երկուերեք) եղբոր հետ ելայ գնացի Սանդիստով, բուական նորա որ ի դրաց վերայ կայր կարգացի: Որ էր օրինակ այս. կատարեցաւ յարմարումն շինուածոյ հիւանդանոցիս հրամանաւ մեծաւ փառաւք Քրիստոսասէր թագուհոյ Ջապէլի ի բուականութեան հայոց ի Ռ եւ Ղ (1241):»:

ՏԵՐ ՅՈՒՍԻԿ ԲԱԶՄԱՃԻՂ ԱՋԱՊԱՀԵԱՆ

Սիսի Աջապահեաններու նազոնց ճիւղի ութերորդ սերունդն էր Տէր Յուսիկ քահանայ. ծնած՝ ԺԶ. դարու վերջաւորութեան, Սիս. մայրամասի դպրոցին մէջ (որ այն ժամանակ քահանայի մը աշակերտ ունէր) ան ուսում ստացաւ եւ պատրաստուեցաւ իրբեք քահանայ:

Գրիգոր Գ. Կեսարացի կաթողիկոսին օրով, 1720ական տարիներուն սկիզբը Հեթումուր Այի փաշա հիւր եղաւ Սիսի մայրամասը, այցելեց դպրոցը եւ անոր ուշադրութիւնը գրաւեց աշակերտներէն մէկը, որուն ձեռքը Աւետարան մը կար. փաշային առաջարկով ան բառեւ Աւետարանը եւ սկսաւ կարդալ Եսայիի ԺԲ. գլխու առաջին համարը. «Ջարթիր, գարթիր Սիոն՝ եւ գգեցիր զգործութիւն քո եւ դու գգեցիր զփառս քո Երուսաղէմ՝ քաղաքը Սրբոյն»:

Փաշան կաթողիկոսին հարցուց, թէ ի՞նչ գուշակութիւն կայ կարդացուածին մէջ. կաթողիկոսը պատասխանեց՝ ըսելով, թէ՛ «դուք եպարքոսութեան աստիճանին պիտի բարձրանաք եւ ձեր շնորհիւ մայրամասը պիտի նորոգուի»: Փաշան խոստացաւ, եպարքոս ըլլալու պարագային, նորոգել մայրամասը եւ բազմապատիկ պարգէներ շնորհել ընթերցող աշակերտին, որ ժամանակ մը ետք ձեռնադրուեցաւ քահանայ՝ Տէր Յուսիկ անունով:



Սալրամա բերդին աւերակները լեռնային Կիլիկիոյ մէջ, գեղեցիկ բնութեան ծոցին

քահանայ երկու եղբայրները՝ Տէր Արիստակէս եւ Տէր Սուրբիս իրենց կարգին բազմանգամ ընտանիքներու նահապետներ եղան:

ՂՈՒԿԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՋԱՊԱՀԵԱՆ

Տէր Յուսիկ քահանայի անդրանիկ գաւակն էր Ղուկաս. ծնած՝ 1711 - 1712ին, Սիս, յիշուած՝ իրբեւ առողջ հասակով, գեղեցիկ տեսքով, առիւծորու ձայնով, կորովի միտքով եւ իմաստուն հոգիով: Մայրամասին ուսման շրջանը աւարտելէ ետք ան Յովհաննէս Զ. Հաճընցի (1729 - 1733) կաթողիկոսէն ձեռնադրուեցաւ կուսակրօն քահանայ եւ յետոյ, հակառակ իր շատ երիտասարդ տարիքին՝ եպիսկոպոս, եւ առաջնորդ զրկուեցաւ Հայկապ:

Երբ Եպարքոս Հեթումուր Այի փաշայի միջնորդութեամբ կայսերական հրովարտակով Կիլիկիոյ աթոռը Աջապահեան ընտանիքին սեփականութիւնը հռչակուեցաւ, Ղուկաս եպիսկոպոս 1733ին ամրան մեկնեցաւ Վահկայ, կաթողիկոսարանին հովոցը, ուր այլ օրերուն ըստ ձեռնարկի միտքով յիշուած: Յովհաննէս Զ. կաթողիկոս Հաճընցի, որ գառնաձայլ տարիքի մէջ կը գտնուէր եւ անդրագէտ էր, գահ տնոր յանձնելով՝ կաթողիկոս օժեց զայն եւ ինք իր ծննդավայրը՝ Հաճըն քաղաքացաւ, վերստանալով իր քահանայական անունը՝ Տէր Աղաճ:

Ղուկաս կաթողիկոս 21 - 22 տարեկան էր, երբ ստանձնեց Կիլիկիոյ Աթոռը. նոյն տարին իսկ ան ձեռնարկեց մայրամասի նորոգութեան եւ շէնցուց զայն՝ կառուցելով վեհաբան, միաբանական թաղ, իսկ Ս. Աստուածածին Մայր Տաճարը հիմնովին նորոգուեցաւ: Ան իր Միքայէլ եղբայրը կուսակրօն քահանայ ձեռնադրեց եւ վախճանեցաւ 23 Յուլիս 1737ին, վարդապառէն ետք, Ս. Թաղէոս Առաքեալի տօնին եւ Մայր Տաճարի Ս. Աննա խորանին առջեւ թաղուեցաւ:

ՄԻՔԱՅԷԼ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՋԱՊԱՀԵԱՆ

Ղուկաս Ա. կաթողիկոսին յաջորդեց քահանայ եղբայրը՝ Միքայէլ Ա., որ 1737 Նոյեմբերին կաթողիկոսական օժու ստացաւ Տէր Աղաճի (նախկին Յովհաննէս Զ. կաթողիկոս) ձեռնարկ: Իր գահակալութեան ընթացքին ան մեծ աշխատանք տարաւ մայրամասի բարեկարգման համար՝ արժանանալով «մեծն ընտրեալ» եւ «վսեմագոյն վերաբերեալ» դրուատական արտաստուութիւններուն:

Միքայէլ կաթողիկոս քսան տարի գահակալելէ ետք, Շաբաթ, 31 Օգոստոս 1758ին Տորո-

սի մօտակայ Հորտուսի մէջ թունաւորումի միջոցով նահատակուեցաւ Կիլիկիոյ տիրակալներէն Գոգանօղլու Եուսուֆ աղայի ձեռնարկը եւ թաղուեցաւ մայրամասին Ս. Աստուածածին Մայր Տաճարին մէջ, եղբոր՝ Ղուկաս կաթողիկոսի կողքին:

ԳԱՐՐԷԼ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՋԱՊԱՀԵԱՆ

Նահատակ Միքայէլ կաթողիկոսին յաջորդեց եղբայրը՝ Գարրիէլ. ան յիշուած է իրբեւ «այր հեզ, խոնարհ, ազգասէր եւ ճշգրտատիպ պատկեր իւրոցն նախնեաց»:

Նախապէս՝ 1737 - 1743 տարիներուն ան Հայկապի առաջնորդ եղած էր, եւ Ս. Աստուածածին եկեղեցին կաթողիկոսութեան ձեռքին տանելու համար իր կաթողիկոս եղբոր հետ Պոլիս գացած եւ արքունի հրովարտակով վերատիրացած էր անոր:

Գարրիէլ կաթողիկոս երբ գահ բարձրացաւ, Կիլիկիա Գոգանօղլու եւ Տիւանօղլու իրարու թշնամի ցեղախումբերու անխնայ պայքարի ու կռիւններու վեճակին մատնուած էր. Վահկայի շրջանը Գոգանօղլուներու տիրապետութեան ենթակայ դարձած էր, Սիս՝ Տիւանօղլուներու ազդեցութեան: Հայուցութեան լուրեր տանջանքներու, բռնութիւններու ու հարստահարութիւններու ենթակայ էր:

Գարրիէլ կաթողիկոս, հակառակ երկրի քաղաքակնօրէն խոնարհ եւ անապահով վիճակին, իր եղբայրներուն սկսած մայրամասի վերաշինութեան ու նորոգութեան ծրագրիները աշխատեցաւ ամբողջացնել: Իսկ հայուցութեան տագնապի կացութեան իւր մը գտնելու համար ան ջանաց հաւասարակշռութիւն պահել թշնամի ցեղախումբերու պայքարներուն մէջ:

Գոգանօղլու եւ Տիւանօղլու ցեղախումբերը 1770ին վճռական պատերազմի պատրաստութիւն սկսան տեսնել. այլ օրերուն Գոգանօղլուներու պետ Եուսուֆ աղա գաղտնի լուր զրկեց Գարրիէլ կաթողիկոսին, թէ իրենք քահանայի փոխ յարձակումներու միտքով, որոնք խորհելով, որ կաթողիկոսը իրենց թշնամիներուն հետ կը գործակցի, որոշեցին հակադարձել:

Սիսի հայուցութեան, կասկածելով Տիւանօղլուներու շարժումներէն եւ՝ մտահոգ, որ վտանգ կը սպառնայ իրենց վեհափառին, սկսան պատրաստուիլ. մօտաւորապէս երեք հարիւր երիտասարդներ սպառազինուած՝ հաւաքուեցան մայրամասը, պաշտպանելու համար կաթողիկոսը:

Տիւանօղլուները տեսնելով, որ հայերը պատրաստուած են, դիմեցին նենգութեան. լուր զրկեցին Գարրիէլ կաթողիկոսին եւ ստիպեցին, որ իր հետեւորդներով միասին իրենց քով՝ Գարաճալը (պատմական Գրազարկ) գիւղը ապաստանի:

Անցան քանի մը օրեր. Գոգանօղլուներու յարձակումը կ'ուշանար, եւ կաթողիկոսը, յուսահատած անոնց սպասելէ ու Տիւանօղլուներուն հետագայ հակադարձութիւնը նկատի ունենալով, Ս. Նաչի շաբաթապահոց Ուրբաթ օրը, 10 Սեպտեմբեր 1770ին ճամբայ ելաւ դէպի Գարաճալը, բայց հանդի Էօրթիւլը գիւղը հասած՝ դարանակալ զինեալներ կրակ բացին ու տեղն ու տեղը զգետնեցին զայն, յօշոտեցին անշնչացած մարմինը եւ կողպտեցին ինչ որ կար վրան, մատն ալ կտրեցին եւ մատանին յափշտակեցին:

Յաջորդ օր, Շաբաթ, 11 Սեպտեմբերին նահատակ կաթողիկոսին մարմինը իր աշակերտներուն կողմէ Սիս փոխադրուեցաւ եւ թաղուեցաւ Ս. Աստուածածին Մայր Տաճարին մէջ, իր եղբայրներուն կողքին:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ

Ելոյթ կ'ուճեցայ

ԸԱԼԷՊԻ Ըամազգայինի «Ն. ԱՂԲԱԼԵԱՆ» մասնաճիւղի

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ պարախումբը

Պարուսոյց՝ ՅՈՎԻԿ ԽԱԶԻԿԵԱՆ

Կազմակերպութեամբ

ԼԻԲՐԱՆԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱՒՈՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ուճեցայ Շաբաթ, 15 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:30ին
 եւ Կիրակի, 16 Մարտ 2003, երեկոյեան ժամը 7:00ին,
 «Յ. ՏԵՐ ՍԵԼԵՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱՇԻՆ ՍԵՉ

Սակ՝ 10,000 եւ 5,000 լիբ. ոսկի

Տոմարը կարելի է ստանալ Տիւրքիոյ Շիքա, Ըամազգայինի գրախանութ «Շաղգոյեան» կեդրոն, ՕBELIX գրախանութ՝ Անթիպատ, Ըամազգայինի «Լեւոն Շանթ» կեդրոն, եւ Ելոյթի օրերը կ'ընէ:

ԴԷՏԵՐՈՒՆ ՎԵՐԱՑԱԿԱՆ ...

Շարունակում՝ 5րդ էջէն

Թերեւս անհոգեկէ են, եւ ընկալանաբար այդ պարագային տարբեր երկիրներու կողմէ տարբեր ելքեր կրնան փնտռուել իրենց չհանգիստ ընթացքին համար:

Հ. Դուրք կը գտնէք, որ Հայաստան պէտք է մերժէ դէտերու եզրակացութիւնը:

Պ.- Դէտերու եզրակացութեան մէջ ոչ արդարացի դիտողութիւններուն պէտք է տալ յստակ պատասխան: Բնականաբար այն, ինչ որ օգտակար է երկրին մէջ հետագայ ժողովրդավարութիւնը խորացնելու համար, պէտք է ընդունել եւ կիրարկել:

Այլ հարց է, որ ժողովրդավարութեան պաշտպանութիւնը նաեւ դարձած է միջոց այս կամ

այն երկրին մէջ քաղաքականութիւն իրականացնելու իմաստով: Ուղղակի պէտք է թող տալ, որ այդ մէկը Հայաստանի մէջ օգտագործուի: Հետեւաբար, երբ կը խօսին ժողովրդավարութեան չափանիշներու համապատասխան կամ անհամապատասխան ըլլալու մասին, ուղղակի պէտք է առաջարկել կէտ առ կէտ յստակացնել այդ չափանիշները: Այլապէս ԵԱՀԿի դէտերու խումբին կողմէ վերացական յայտարարութիւնները անընդունելի են: Պէտք է յստակ հարցեր դնել, որպէսզի առարկայական քննարկում կատարուի:

Բացի այս, ԵԱՀԿի դէտերը, խօսելով ժողովրդավարութեան պահանջներու, օրէնքին համար

պատասխան ընտրութիւններ կազմակերպելու անհրաժեշտութեան մասին, կը մոռնան մէկ բան, որ դէտեր ընտրական գործընթացին մասնակից չի կրնար ըլլալ: Ան պէտք է ըլլայ բացարձակապէս չէզոք դերի

մէջ: Դժբախտաբար, իրենք դարձան ընտրութիւններուն մասնակից ընդդիմութեան հետ իրենց յարաբերութիւններով եւ ընտրութիւններու ընթացքին իրենց կատարած որոշ յայտարարութիւններով եւ մեկ

ՍԱԿԱՐԱՆ

Պէլյուրի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիծերը հետեւեալներն են:

Սուրիական թղթուկի իրաքեան տինար	32,35 - 32,45 լ.ն.
Քուեյթեան տինար	4855,00 - 4865,00 լ.ն.
Յորդանանեան տինար	5035,00 - 5060,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Ա.Մ.Էմիրութեան տինար	3985,00 - 4010,00 լ.ն.
Քաթարեան ռիալ	410,75 - 412,75 լ.ն.
Սէուտական ռիալ	413,75 - 415,75 լ.ն.
Օմանեան ռիալ	402,00 - 404,00 լ.ն.
Եգիպտական կիւն	3895,00 - 3920,00 լ.ն.
Անգլիական արքերի	249,00 - 259,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	2413,00 - 2423,00 լ.ն.
Թրքական լիրա	1135,00 - 1140,00 լ.ն.
Կիպրական փաունտ	93,50 - 94,00 լ.ն.
Ճափոնական հապար	2840,00 - 2865,00 լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	12,80 - 12,90 լ.ն.
Ամերիկեան տոլար	2,95 - 3,00 լ.ն.
Քանադական տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1029,00 - 1034,00 լ.ն.
Եւրո	919,00 - 924,00 լ.ն.
	1665,00 - 1675,00 լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	137,000 - 142,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	123,000 - 128,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	114,000 - 119,000 լ.ն.
Մեքսիքական փէստ	655,000 - 675,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,055,000 - 17,255,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	353,00 - 353,50 \$
Մէկ օնս արծաթ	4,65 - 4,67 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը

Եւրո	1.1055 - 1.1060
Քանադական տոլար	1.4622 - 1.4628
Չուիցերիական ֆրանք	1.3260 - 1.3265
Ճափոնական ետէ	116.92 - 117.02
Մէկ սրբերից	1.6010 - 1.6015
Մէկ տոլար	555 դրամ

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիցի Ա. 6շոյում Գիցի Բ. 6շոյում		
Ա. կարգ	4 2/8	4 3/8
Բ. կարգ	5	5

ԼՈՒՆԱՅՈՒՆ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ԷՆՐ. 01-252852

www.hamazkayin.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՇՈՒՆԵԱՆԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 16 Մարտ 2003, Ջալալի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ՍԵՂԱ ՍԱՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 16 Մարտ 2003, Սոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԶԵՍԱՊ ԶԵՍԱՊ
ՀՐԱՉ ԹԻԹԻՉԵԱՆԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 16 Մարտ 2003, Զեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5389 Պատրաստեց՝ Ս.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՐՀՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵԱՆ

1. Բացաձայր կամ ապարդէզ - Երկվար:
2. Միւս - Գազաթ:
3. Ինքնագրուի:
4. Որթատունկի կտրուած ճիւղ - Հայկական խազ մը - Աչք:
5. Եշիլ Ըրմաք գետի պատմական անունը - Կաղկանձէ:
6. Դժբախտ - Դեհ:
7. Արական անուն - Կրկնուած բաղաձայններ:
8. Սղոցի ակոյա - Հայաստանի քաղաքներէն:
9. Գաղթող թռչուն - Դրկից տառեր:
10. Չայնայից գիրեր - Վաճառանիւթ:
11. Արական օտար անուն - Հարթութիւն:

ԹԻՒ 5388

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ն	Ո	Վ	Ա	Մ	Ո	Ն	Ո	Ն	Ո
2	Ն	Ո	Վ	Ա	Մ	Ո	Ն	Ո	Ն	Ո
3	Գ	Թ	Ի	Է	Ք	Ա	Ս	Ա	Կ	
4	Ա	Ր	Ա	Կ	Ն	Ս	Ք	Ա	Ս	Ք
5	Բ	Ե	Ն	Ս	Ք	Ա	Ս	Ք	Ա	Ս
6	Ա	Ն	Ե	Մ	Ք	Ա	Ս	Ք	Ա	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ձ	Ա	Կ	Ի	Ր	Ա	Ս	Ո	Ն	Ո
9	Ո	Ր	Գ	Ա	Ն	Ս	Ք	Ա	Ս	Ք
10	Ի	Փ	Ձ	Ա	Ր	Ա	Ս	Ք	Ա	Ս
11	Ա	Ր	Ա	Ս	Ք	Ա	Ս	Ք	Ա	Ս

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)
Ձեր հարազատներէն մի պահէք լուրջ գաղտնիք մը, որովհետեւ ուշ կամ կանուխ անոնք պիտի լսեն այդ գաղտնիքը պահելը եւ ծանր հետեւանքներ կրնայ ունենալ: Ուրեմն այժմէն յետեւեցէք, որպէսզի անոնք լուծեն խնդիրը:

☆ **ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
Ձեր բնույթի անհամեմատեան հետ ձեր կայր մի բնույցէք, յաճախակի կապ պահեցէք, որպէսզի իրարմէ լուր ունենաք: Այդպիսով, ձեր զգացական կեանքը կը հասունանայ:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)
Հեռու կեցէք շատախօս անձ մը, որ իր չքաւորութեան մասին չափազանցուած տեղեկութիւններ կու տայ ձեզ աւելի շորթելու համար: Ամէն մարդ գիտէ, որ ունիք փափուկ սիրտ. ահա թէ ինչու մարդիկ կ'ուզեն շահագործել ձեզ:

☆ **ԽՆՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)
Այսօր ձեր շուրջիններէն իւրաքանչիւրը պիտի զբաղի ձեր վիճակով. հարց պիտի տաք դուք ձեզի, թէ ինչու աշխատէք: Պատասխանը պարզապէս անոնք ձեզ շատ կը սիրեն:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յունիսէն 23 Օգոստոս)
Ձեր տրամադրութիւնը կ'ազդէ արդեօք ձեր ֆիզիքականին վրայ: Ամէն պարագայի թէ ձեր տրամադրութիւնը եւ թէ ձեր առողջութիւնը կարօտ են բարելաւումի, որովհետեւ անոնք երկուքն ալ նոյն մակարդակի վրայ են:

☆ **ԿՈՅՄ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Ձեր բարեկամները կ'ուզեն ձեզ ներգրաւել իրենց ծրագրերուն մէջ: Պիտի հետաքրքրուիք եւ ազդուիք անոնց այս վերաբերումէն ու պիտի ընդունիք անոնց առաջարկը:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Կ'ակնկալէք, որ ամսականի յաւելում ունենաք կամ նիւթապէս վարձատրուիք ձեր աշխատանքի մարզին մէջ՝ հակառակ ձեր թոյլ աշխատանքին: Որքան շատ յաւատեալութիւն ունիք:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Եթէ ձեր գործը հետազօտական աշխատանքի մարզին կը վերաբերի, յաւ արդիւնք պիտի ունենաք այսօր, որովհետեւ ձեր մեծաւորները պիտի գնահատեն ձեզ՝ տեսնելով, որ յաւ նամբու վրայ էք:

☆ **ԱՂԵՆԱԻՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Ձեր անտեսական վիճակը պիտի մնայ ոչ փայլուն, այնքան ատեն որ կը շարունակէք յաւելեալ եւ ոչ կարեւոր գնումներ կատարել:

☆ **ԿՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Քիչ մը յանուզման արտայայտութիւն պիտի ունենաք զգալուն անձի մը դիմաց ու ետքը պիտի չկարենաք համոզել զայն, թէ իրաւունք ունէիք այդպէս վարուելու: Ուշադիր եղէք ձեր խօսքերուն:

☆ **ՈՒՎԱՆՅՈՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
Եթէ ընտանի անտուն մը ունիք, հիւանդութեան նշաններ ցոյց պիտի տայ: Հետեւաբար անսանաքուծի մը տարէք, որպէսզի զայն բուժէ: Ձեր կարգին կարիքը ունիք ֆիզիքական դարմանումի:

☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)
Յանկարծակի սիրային հանդիպում մը կամ այլ մարդի վերաբերող հանելի միացում մը ձեզ պիտի երջանկապէս այսօր: Անխուսափելի հանդիպում մըն է այս:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՕՐ / ՅՈՒՅԱՀԱՆԳԵՄ / ՉՔՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

«ՈՒԱՐՇՕ ՉԷՅՄՊԵՐ ՕՓԵՐԱ»Ն ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ Ճ. ՏՈՆԻՉԵԹԹԻԻ «ՏՈՆ ՓԱՍՔԱԼ»Ը

«Այ Պուսթան» 10րդ փառատօնը իր երկարատեւ ու այլապան յայտագրին մէջ կարեւոր տեղ յատկացուցած է նաեւ օփերաներու: Անցնող շաբաթներուն ռուսական «Հելիքոն-օփերան» ներկայացուց Չայքովսքիի «Եւզենի Օնէկին» օփերան, որ մեծ ընդունելութեան արժանացաւ հասնող սառնեան տարուան կողմէ:



Իր չորրորդ շաբաթուան ընթացքին «Այ Պուսթան» փառատօնը բեմ կը հանէ վարչախոյս սենեկային նուագախումբ-օփերան, որուն այս տարուան մասնակցութիւնը օրհնուած է փառատօնի տասնամեայ պատմութեան մէջ: Խումբը այս տարի երաժշտաւէր հանրութեան պիտի մատուցէ Տոնիչեթթիի կատակերգական «Տոն Փաքալ» օփերան իտալական այս օփերան պիտի ներկայացուի իտալերէն լեզուով, սակայն հասնող սառնեան տարուան համար տրամադրելի պիտի ըլլայ պատարագ վրայ բնագիրին անգլերէն թարգմանութիւնը:

Իր ուրախ ու յուարք մթնոլորտով յատկանշուող «Տոն Փաքալ» օփերան կը ներկայացնէ ամուսնանալու ծրագրերը մշակող տարեց անուրի մը՝ Տոն Փաքալը, որուն եղբորորդին՝ Էոնեսթոն եւ կը ծրագրէ ամուսնանալ: Էոնեսթոն սիրահարած է Նորինայի եւ անոր հետ ամուսնանալու իր ծրագիրը հանձնելի չի թուիր Տոն Փաքալին: Օփերային այլ հերոսներէն տոքթ. Մալաքեար, Նորինայիի հետ դաւեր նիւթայով, կ'աշխատի ձախուղելու Տոն Փաքալի ամուսնական ծրագիրները, եւ արդիւնքը կ'ըլլայ կեղծ ու սարքուած ամուսնական արարողութիւն մը, որուն արարտիւն ի յայտ

կու գայ, թէ Նորինայ սիրուելին է Էոնեսթոնի: Կատակերգութեան արարտիւն Տոն Փաքալը դարձաւ ինքզինք կը գտնէ ամուրի վիճակի մէջ եւ ճարտաստ հաւանութիւն կու տայ Նորինայի եւ Էոնեսթոնի ամուսնութեան:

Վարչախոյս սենեկային օփերան «Տոն Փաքալ»-ի անաչին ներկայացումը կատարեց երէկ, «Այ Պուսթան» պանդոնային մէջ, երկրչայան ժամը 8:30ին, ուր նոյն ժամուն տեղի պիտի ունենայ այսօրուան ներկայացումը: Նշենք, որ օփերայի խումբը «Այ Պուսթան» փառատօնի ծիրին մէջ ունեցաւ այլ ելոյթ մը եւս, երբ իր նուագախումբն ու մեներգողները Պէյթ Մէրիի «Մար Սէսին» եկեղեցւոյ մէջ Կիրակի, 9 Մարտին, առաւօտեան ժամը 10:30ին մատուցեցին կրօնական երգեցողութիւն:

ԱՅՍՕՐ

Նկարչական ցուցահանդէս՝ Նագեմ Մըզգիբի «Նաթիւր մորթ Է փեսած», Քիւլիւրգեմբերումի մէջ, մինչեւ 21 Մարտ:

- Փառատօն «Ճեսքիվալ հիսփանօ - ամերիքեմ տը կիթառ», կը նուագեն Ճոաքիմ Ռիսօ եւ Տոմիկո Քորուօ, Պէլյուրի Ամերիկեան համալսարանի «Եսեմպիլ հոյ» սրահին մէջ, ժամը 20:00ից:

- «Այ Պուսթան» փառատօն, «Ուարշօ Էյմպըր օփերան» կը ներկայացնէ Ճ. Տոնիչեթթիի «Տոն Փաքալ» օփերան, ժամը 20:30ից, «Այ Պուսթան» պանդոնային մէջ:

- «Ճեսքիվալ Շամս տէ ժեօն», ժամը 20:30ից, Պէլյուրի քառասունամեայ մէջ:

- Նկարչական ցուցահանդէս՝ Մոնա Նահլէի գործերը, «Շահին» ցուցասրահին մէջ, մինչեւ 20 Մարտ:

- Երգախումբն եւ պարային թատրոն՝ Մանուր Ռահպանի «Մըլուք էլ քաուաք», «Քաղցին Տիւ Լիպան»-ի մէջ, ժամը 20:30ից:



ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 12 Մարտ 1953

ՅԻՐՈՒՑԱՆ ՀԱՅԵՐ

Իրանի Փերիա գաւառի հայերուն մասին տեղեկութիւններ տուած է ինքը քաղելով «Ալիք»-էն: Կարգ մը տեղեկութիւններ եւս. Փերիայ Նամակերտ, Բոլարան եւ Սանգիբարան գիւղերուն մէջ հաստատուած են չորսդասնան եւ վեցդասնան դպրոցներ: Բոլորը միասին ունին 8 - 10 պարսիկ ուսուցիչներ: Գաւառի միւս հայ դպրոցները ունենին 30 ուսուցիչներ՝ 1000 - 3000 ռիալ ունեցողով: Գաւառի կրթական գործին տարեկան ելեւմուտքն է 80 - 100 հազար ռիալ, որուն մէկ մասը կը գոյանայ նպաստներէ, միւս մասն ալ՝ թոշակներէ: Աշակերտներու ընդհանուր քիւն է 1500՝ պետական դպրոցներու շաքարներուն հետ միասին: Փերիա գաւառին մէջ 1910-էն ի վեր կան գրագրողներ: Նամակերտի գրագրարանը դպրոցին հետ պետականացած էր. կանգուն էր միայն Սանգիբարանի գրագրարանը: «Պօղոս Անդրեասեան» անունով՝ Խոյանց գիւղին մէջ «Արուկեան»

գրագրարանը հիմնուեցաւ 1945ին: Ունի հազար կտոր գիրք: Ապա սկսան միւս գիւղերուն մէջ ալ հիմնել գրագրարաններ: Դարգուցի մէջ՝ «Իսահակեան» (1946), Բոլարան գիւղին մէջ՝ «Ահարոնեան», Նամակերտի

